**ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2**

ք. Մեծամոր «11» փետրվարի 2026թ.

Մեծամորի համայնքապետարան, ի դեմս համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյանի, որը գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼՆԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ք. Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի առավելագույն գինը կազմում է 14,500,000.00 (տասնչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Պայմանագիրը կնքվելու է առավելագույն գնով և Պատվիրատուն վճարումը կատարելու է իր պահանջով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացված աշխատանքների կատարման պահանջ-հայտերի հիման վրա փաստացի կատարված աշխատանքի դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, **սակայն 25.12.2026 թվականի դրությամբ** պահանջ-հայտերի

բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարանը
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի
վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332001503
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
---------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԼՆԱՐ» ՍՊԸ
Արմավիր, Նորապատ 17փ, 72
vahe159@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048

Տնօրեն՝
---------------------------- Բ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«11» փետրվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չ/հ | Աշխատանքի | | | | | | Կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | Առավելագույն Գումար | Հասցեն | Ժամկետը** |
| 4 | 45221200/512 | ԷՑՎ 10-160-50 (32կվտ) պոմպերի վերանորոգման աշխատանքներ | Մեծամորի համայնքապետարանի խորքային հորերի ԷՑՎ 10--160-50 32կվտ մակնիշի մեկ պոմպի և էլ. Շարժիչի վերանորոգման համար կատարողը պարտավոր է ընդունել այն և անմիջապես իրականացնել անհրաժեշտ քանդման, տեղափոխման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքները:Յուրաքանչյուր սարքի սպասարկման համար առաջին հերթին կազմվում է ներկայացված սարքի թերությունների երկկողմանի ակտ, որից հետո 1 պոմպի համար կատարել հետևյալ աշխատանքները՝ 18կգ փաթույթ, 3հատ Էլ. Շարժիչի առանձգակալ, 3հատ էլ.շարժիչի խարիսխի վրան, 1 հատ կրունկ, 1 հատ ենթակրունկ, 1.5մ պռեշպան, 2հատ շարժիչի առանցքակալների իրան,1հատ ենթակրունկի հիմք,1հատ ստատոր, 8հատ շպիլկա, 6մ ՎՊՊ 16մմ մալուխ,1.5կգ հեղյուս,մանեկ, 5հատ մեկուսիչ ժապավեն, 1հատ էլ. Շարժիչի խարիսխ,3հատ պոմպի առանցքակալ, 3 հատ պոմպի լիսեռի վրան, 2հատ բանվորական անիվ, 4հատ սեղմող օղակ, 1 հատ պոմպի լիսեռ,1հատ կցորդիչ, 4հատ շպոնկա: Պոմպը մոնտաժել, փորձարկել: Վերադարձնել փոխված դետալները, մալուխները և տալ սեզոնային երաշխիք: Խորքային հորը հանելուց հետո վերանորոգման աշխատանքների առավելագույն ժամկետը սահմանվում է 3 օրացուցային օր: Խորքայի հորերի վերանորոգման ավարտից հետո՝ սահմանվում է երաշխիքային ժամկետ ՝ 3 ամիս, որի ընթացքում ի հայտ եկած ցանկացած անսարքության դեպքում կատարողը պարտավորվում է կատարել անվճար վերանորոգում, թերությունների շտկում: | դրամ | 1 | 7000000 | ՀՀ, Արմավիրի մարզի Մեծամոր համայնք՝ ըստ պատվիրատուի կողմից տրամադրված հասցեի | Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ յուրաքանչյուր անգամ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, որից հետո՝ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության |
| 6 | 45221200/514 | ԷՑՎ 10-160-30 (22կվտ) պոմպերի վերանորո | Մեծամորի համայնքապետարանի խորքային հորերի ԷՑՎ 10--160-30 22կվտ մակնիշի մեկ պոմպի և էլ. Շարժիչի վերանորոգման համար կատարողը պարտավոր է ընդունել այն և անմիջապես իրականացնել անհրաժեշտ քանդման | դրամ | 1 | 6800000 | ՀՀ, Արմավիրի մարզի Մեծամոր համայնք՝ | Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գման աշխատանքներ | ապամոնտաժման,տեղափոխման զննման և գնահատման աշխատանքները:Յուրաքանչյուր սարքի սպասարկման համար առաջին հերթին կազմվում է ներկայացված սարքի թերությունների երկկողմանի ակտ, որից հետո 1 պոմպի համար կատարել հետևյալ աշխատանքները՝ 15 կգ փաթույթ ПВДП , 6 մետր մալուխ ВПП, 2 մետր պղեշպան, 5 հատ մեկուսիչ ժապավեն, 3 հատ էլ.շարժ. Առանցքակալ, 3 հատ էլ.շարժիչի խարիսխի վրան, 1 հատ կրունկ, 1 հատ ենթակրունկ, 2 հատ պոմպի առանցքակալ, 2 հատ պոմպի լիսեռի վրան, 2հատ սեղմող օղակ, 1 հատ բանվորական անիվ, 2 հատ Շարժիչի առանցքակալի իրան, 1 հատ ենթակրունկի հիմք, 1 հատ ստատոր, 8 հատ շպիլկա , 1,5 կգ՝ հեղյուս, մանեկ, 1 հատ Էլ.շարժիչի խարիսխ, 1 հատ պոմպի լիսեռ, 1 հատ մուֆտ / կցորդիչ/, 5 հատ երիթ / շպոնկա/, 1 հատ պոմպի ապամոնտաժ, 1 հատ պոմպի մոնտաժ: Պոմպը մոնտաժել, փորձարկել: Վերադարձնել փոխված դետալները, մալուխները և տալ սեզոնային երաշխիք: Խորքային հորը հանելուց հետո վերանորոգման աշխատանքների առավելագույն ժամկետը սահմանվում է 3 օրացուցային օր: Խորքայի հորերի վերանորոգման ավարտից հետո՝ սահմանվում է երաշխիքային ժամկետ ՝ 3 ամիս, որի ընթացքում ի հայտ եկած ցանկացած անսարքության դեպքում կատարողը պարտավորվում է կատարել անվճար վերանորոգում, թերությունների շտկում: | | | | ըստ պատվիրատուի կողմից տրամադրված հասցեի | յուրաքանչյուր անգամ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, որից հետո՝ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության |
| 8 | 45221200/516 | K45-30 3k-9 7.5կվ պոմպերի վերանորոգման աշխատանքներ | Մեծամորի համայնքապետարանի խորքային հորերի K45-30 3k-9 7.5կվտ մակնիշի մեկ պոմպի և էլ. Շարժիչի վերանորոգման համար կատարողը պարտավոր է ընդունել այն և անմիջապես իրականացնել անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, տեղափոխման զննման և գնահատման աշխատանքները:Յուրաքանչյուր սարքի սպասարկման համար առաջին հերթին կազմվում է ներկայացված սարքի թերությունների երկկողմանի ակտ, որից հետո 1 պոմպի համար կատարել հետևյալ աշխատանքները՝ 5 կգ փաթույթ, 1 մետր պղեշպան , 2 հատ էլ.շարժ. Առանցքակալ, 2 հատ պոմպի առանցքակալ, 1 հատ պոմպի լիսեռի վրան, 3 հատ երիթ / շպոնկա/ , 1 հատ պոմպի ապամոնտաժ, 1 հատ պոմպի մոնտաժ : Պոմպը մոնտաժել, փորձարկել: Վերադարձնել փոխված դետալները, մալուխները և տալ սեզոնային երաշխիք Խորքային հորը հանելուց հետո վերանորոգման աշխատանքների առավելագույն ժամկետը սահմանվում է 3 օրացուցային օր: Խորքայի հորերի վերանորոգման ավարտից հետո՝ սահմանվում է երաշխիքային ժամկետ ՝ 3 ամիս, որի ընթացքում ի | դրամ | 1 | 700000 | ՀՀ, Արմավիրի մարզի Մեծամոր համայնք՝ ըստ պատվիրատուի կողմից տրամադրված հասցեի | Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ յուրաքանչյուր անգամ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ, որից հետո՝ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հայտ եկած ցանկացած անսարքության դեպքում կատարողը պարտավորվում է կատարել անվճար վերանորոգում, թերությունների շտկում: | | | | | պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորությա ն |
| Ընդամենը՝ | | | | 14,500,000.00 | | | | |

* Աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 25-ը:
** Աշխատանքները պետք է կատարվեն համաձայն Հավելված 1.1, 1.2, 1.3-ով սահմանված ձևաչափով մասնակցի կողմից տրամադրվող գնացուցակի:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարանը
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332001503
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ____________ Լ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԼՆԱՐ» ՍՊԸ
Արմավիր, Նորապատ 17փ, 72
vahe159@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048

Տնօրեն՝ ____________ Ք. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«11» փետրվար 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 4
## ԷՑՎ 10-160-50 (32ԿՎՏ) ՊՈՄՊԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎԱՆԱՑՈՂԵՐԻ /ԳՆԱՑՈՒՑԱԿ/

| N | Աշխատանքներ կատարման նյութերի անվանում | Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | 18 կգ Փաթույթ | 126000 |
| 2 | 3 հատ էլ. Շարժիչի առանձգակալ | 15000 |
| 3 | 3 հատ էլ.շարժիչի խարիսխի վռան | 15000 |
| 4 | 1 հատ կրունկ | 25000 |
| 5 | 1 հատ ենթակրունկ | 25000 |
| 6 | 1.5 մ պռեշպան | 1000 |
| 7 | 2 հատ շարժիչի առանցքակալների իրան | 1000 |
| 8 | 1 հատ ենթակրունկի հիմք | 1000 |
| 9 | 1 հատ ստատոր | 5000 |
| 10 | 8 հատ շպիլկա | 7000 |
| 11 | 6մ ՎՊՊ 16մմ մալուխ | 12000 |
| 12 | 1.5 կգ հեղյուս | 1500 |
| 13 | մանեկ | 1000 |
| 14 | 5 հատ մեկուսիչ ժապավեն | 1000 |
| 15 | 1 հատ էլ. Շարժիչի խարիսխ | 1000 |
| 16 | 3 հատ պոմպի առանցքակալ | 15000 |
| 17 | 3 հատ պոմպի լիսեռի վռան | 15000 |
| 18 | 2 հատ բանվորական անիվ | 18000 |
| 19 | 4 հատ սեղմող օղակ | 6000 |
| 20 | 1 հատ պոմպի լիսեռ | 1000 |
| 21 | 1 հատ կցորդիչ | 1000 |
| 22 | 4 հատ շպոնկա | 1500 |
| 23 | 1 հատ պոմպի ապամոնտաժ | 20000 |
| 24 | 1 հատ պոմպի մոնտաժ | 20000 |
| | Ընդամենը միավոր գների հանրագումար | 335000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարանը
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի
վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332001503
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար ________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԼՆԱՐ» ՍՊԸ
Արմավիր, Նորապատ 17փ, 72
vahe159@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048

Տնօրեն՝ ________ Ք. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2
«11» փետրվար 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 6
## ԷՑՎ 10-160-30 (22ԿՎՏ) ՊՈՄՊԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎԱՆԱՑՈՂԵՐԻ /ԳՆԱՑՈՒՑԱԿ/

| N | Աշխատանքներ կատարման նյութերի անվանում | Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | 15 կգ փաթույթ ПВДП | 97500 |
| 2 | 6 մետր մալուխ ВПП | 12000 |
| 3 | 2 մ պոեշպան | 2000 |
| 4 | 5 հատ մեկուսիչ ժապավեն | 1000 |
| 5 | 3 հատ էլ. շարժ. առանցքակալ | 15000 |
| 6 | 3 հատ էլ. շարժիչի խարիսխի վռան | 15000 |
| 7 | 1 հատ կրունկ | 20000 |
| 8 | 1 հատ ենթակրունկ | 20000 |
| 9 | 2 հատ պոմպի առանցքակալ | 10000 |
| 10 | 2 հատ պոմպի լիսեռի վռան | 10000 |
| 11 | 2 հատ սեղմող օղակ | 4000 |
| 12 | 1 հատ բանվորական անիվ | 6000 |
| 13 | 2 հատ շարժիչի առանցքակալի իրան | 1000 |
| 14 | 1 հատ ենթակրունկի հիմք | 1000 |
| 15 | 1 հատ ստատոր | 1000 |
| 16 | 8 հատ շպիլկա | 5000 |
| 17 | 1,5 կգ հեղյուս | 2000 |
| 18 | մանեկ | 1000 |
| 19 | 1 հատ էլ. շարժիչի խարիսխ | 1000 |
| 20 | 1 հատ պոմպի լիսեռ | 1000 |
| 21 | 1 հատ մուֆտ / կցորդիչ/ | 1000 |
| 22 | 5 հատ երիթ / շպոնկա/ | 1000 |
| 23 | 1 հատ պոմպի ապամոնտաժ | 20000 |
| 24 | 1 հատ պոմպի մոնտաժ | 20000 |
| | Ընդամենը միավոր գների հանրագումար | 267500 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարանը
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի
վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332001503
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝ ---------------------------- Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԼՆԱՐ» ՍՊԸ
Արմավիր, Նորապատ 17փ, 72
vahe159@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048

Տնօրեն՝ ---------------------------- Ք. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.3
«11» ________ 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 8
## K45-30 3K-9 7.5ԿՎ ՊՈՄՊԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿԸ /ԳՆԱՑՈՒՑԱԿ/

| N | Աշխատանքներ կատարման նյութերի անվանում | Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| | | 3 |
| 1 | 2 | 30000 |
| 1 | 5 կգ Փաթույթ | 2000 |
| 2 | 1 մ պռեշպան | 9000 |
| 3 | 2 հատ Էլ. շարժ. առանցքակալ | 9000 |
| 4 | 2 հատ պոմպի առանցքակալ | 3000 |
| 5 | 1 հատ պոմպի լիսեռի վրան | 2000 |
| 6 | 3 հատ երիթ / շպոնկա/ | 10000 |
| 7 | 1 հատ պոմպի ապամոնտաժ | 10000 |
| 8 | 1 հատ պոմպի մոնտաժ | |
| | | 75000 |
| | Ընդամենը միավոր գների հանրագումար | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարանը
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի
վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332001503
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար
________ Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱԼՆԱՐ» ՍՊԸ
Արմավիր, Նորապատ 17փ, 7շ
vahe159@mail.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048

Տնօրեն՝
________ Բ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«11» ապրիլի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը առավելագույն գինը |
| 4 | 45221200/512 | ԷՑՎ 12-255-30 (32կվտ) պոմպերի վերանորոգման աշխատանքներ | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 | 7,000,000.00 |
| 6 | 45221200/514 | K90/55 4k-8 22կվ պոմպերի վերանորոգման աշխատանքներ | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 | 6,800,000.00 |
| 8 | 45221200/516 | K45-30 3k-9 7.5կվ պոմպերի վերանորոգման աշխատանքներ | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 | 700,000.00 |
| Ընդամենը | | | 14,500,000.00 | | | | | | | | | | | | |

* Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

Պատվիրատուն վճարումը կատարում է իր պահանջով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով ներկայացված աշխատանքների կատարման պահանջ-հայտերի հիման վրա փաստացի կատարված աշխատանքի դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն Հավելված 1.1, 1.2, 1.3-ով սահմանված գնացուցակի, **սակայն 25.12.2026 թվականի դրությամբ պահանջ-հայտերի բացակայության դեպքում չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորության:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մեծամորի համայնքապետարանը | «ԱԼՆԱՐ» ՍՊԸ |
| ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 | Արմավիր, Նորապատ 17փ, 72 |
| gnumnermetsamor@mail.ru | vahe159@mail.ru |
| ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900332001503 | ՀՀ 163108076072 |
| ՀՎՀՀ 04440608 | ՀՎՀՀ 04447048 |
| Համայնքի ղեկավար՝ ________ Է. Հովհաննիսյան | Տնօրեն՝ ________ Ք. Գևորգյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3*
*«____» _________________ 20  թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
_______________________________
_______________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
հվհհ __________________________

Պատվիրատու
_______________________________
_______________________________
գտնվելու վայրը _______________
հհ___________________________
հվհհ__________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ___________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »   «                    » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________________________
ստորագրություն
_______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
_______________________________
ստորագրություն
_______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» ________________ 20 թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |

*Հավելված N 4*
*«____» _________________ 20 թ. կնքված*
*ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը____________ հայտնում է, որ.

1. ____պատվիրատուի անվանումը___-ի և _________կատարողի անվանումը______-ի միջև «----» ____________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __կատարողի անվանումը_________-ի միջև «----» ___________ 20 թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Հավելված 4.2
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

«_____»_________________ 2026թ.

ք.Մեծամոր

«Ալնար» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Քնարիկ Գևորգյանի (անձնագիր AP0698831, տրված 16.01.2017 թ. 048-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Մեծամորի համայնքապետարանը-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են

ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ալնար» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, Նորապատ 17/7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048
Տնօրեն՝ Քնարիկ Գևորգյան
Կ.Տ

Օր/ամիս/տարի

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

1.

2. Թիվ Ներկայացման ամսաթիվը՝ «___» ___ 20___թ.

3.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ ԱԼՆԱՐ ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 163108076072

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 04447048

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Մեծամորի համայնքապետարանը

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 04440608

12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

13. Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900335239373

14. Գումարը (թվերով և բառերով)՝ 2175000/երկու միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD

17. Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը) ՝

<ակցեպտավորված վճարում>

19. Վճարման պայմանները՝

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

21.ա. Վճարողի ստորագրությունները՝

«ԱԼՆԱՐ» «ALNAR» 04447048

/____________________/

/____________________/

21.բ. Կ.Տ.

22.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

Կ.Տ.

22.բ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

Կ.Տ.

24.բ.

24.գ «___» ___ 20___ թ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

Կ.Տ.

23.բ.

23.գ. Կատարման ամսաթիվը՝ «___» ___ 20___թ.

**Հավելված 5.1**

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 **ծածկագրով**

**գնանշման հարցման հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**(պայմանագրի ապահովում)**

«______»____________________ 2026թ.

ք. Մեծամոր

«Ալնար» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Քնարիկ Գևորգյանի (անձնագիր AP0698831, տրված 16.01.2017 թ. 048-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Մեծամորի համայնքապետարանը-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/160-2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ալնար» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, Նորապատ 17/7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163108076072
ՀՎՀՀ 04447048
Տնօրեն՝ Քնարիկ Գևորգյան
Կ.Տ

Օր/ամիս/տարի

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

1.

2. Թիվ Ներկայացման ամսաթիվը՝ «___» ___ 20___թ.

3.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ ԱԼՆԱՐ ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 163108076072

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 04447048

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Մեծամորի համայնքապետարանը

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 04440608

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900335239373

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1450000/ մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կապարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

21.ա. Վճարողի ստորագրությունները

/_____________________/

/_____________________/

Կ.Տ.

21.բ.

22.ա. Շահառուի ստորագրությունները

/_____________________/

/_____________________/

Կ.Տ.

22.բ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/_____________________/

/ստորագրություն/

Կ.Տ.

23.բ.

23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/_____________________/

/ստորագրություն/

Կ.Տ.

24.բ.

24.գ "___" ___ 20___ թ.